

**ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՎԱՑՈՒ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ՃԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿՆ ԻԲՐԵՎ ԿՐԹԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՆԱՐԵԿՅԱՆ ԴՊՐՈՑԻ
ԳԻՏԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ**

Խոսարով Անձևացու գրական ժառանգության մեջ կարևորագույն տեղ է գրավում «Մեկնութիւն ժամակարգութեան» հիմնարար աշխատութիւնը, որը խոր ազդեցութիւն է թողել հայ միջնադարի մեծագույն դպրոցներից մեկի՝ Նարեկյան դպրոցի ձևավորման ու զարգացման ընթացքի վրա¹:

Բարդ ու բազմաշերտ այս երկը, որում առկա են ժանրերի զուգորդության և փոխներթափանցման երևույթներ, մեծ դեր է խաղացել դպրոցի գիտական-կրթական համակարգի ձևավորման գործում:

Նրանում առաջ են քաշվում մի շարք տեսական և գործնական խնդիրներ, որոնք ուսուցողական-կրթական որոշակի ուղղվածութիւն ունեն: Այդ խնդիրները հեղինակը ներկայացնում է երկի առաջաբանում, ավարտին կցված հիշատակարանում և այլուր, մեկնության զանազան մասերում:

Մասնավորապես, երկի առաջաբանում Խոսարով Անձևավացին գրում է.

«Ընդ Աստուծոյ եւ վասն Աստուծոյ խօսելով, ամենայն արթնութեամբ եւ զգուշաւորութեամբ պարտիմք միտ դնել բանիցն ասացելոց...

Այլ եղաք բանաւորք եւ մտաւորք, եւ սպասառուք յանբանիցն. զի զնոցայն եւ զմերն բովանդակ՝ մեք տացուք Աստուծոյ բան՝ մտաց լուսաւորութեամբ. եւ զուզահրեշտակք յերկրի, նման երկնայնոցն լիցուք...

Եւ այս՝ այսպէս է, անշուշտ ջանասցուք ըստ կարի մերոսմ գպաշտօնս մեր մատուցանել Աստուծոյ՝ ի սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց եւ յանկեղծաւոր հաւատոց...

Եւ զի մի՛ դարձեալ բամբասիցիմք յԱստուծոյ որպէս հրէայքն... Եւ կամ անպտուղ մտօք լինիցիմք... Այլ զի սաղմոս ասասցուք եւ ի միտ առցուք... Եւ զի մի՛ լինիցիմք որպէս ընդ օդս խօսեցեալք. եւ կամ ո՛չ գիտելով զգօրութիւն ձայնին. լինիցիմք ասողքս՝ խուժ եւ լսողքն՝ դուժ:

Յաղագս այսորիկ կամեցայ ես բացայայտել որ ի պաշտաման եկեղեցւոյ քարոզութիւնք եւ աղօթք քահանայականք: Զոր գիտակքն՝ մի՛ արհամարհեսցեն. զի թէ եւ ինքեանք անկարօտ են մերոց իմաստիցս, այլ ի պարզամտացն հայեցեալ օգուտս՝ ընկալցին զմեր ջանս վաստակոց...»²:

Հեղինակի խնդիրն է բացահայտել արարողապաշտության, աղոթքների և սաղմոսների ներքին՝ հոգևոր իմաստը: Իր երկի ստեղծման դրդապատճառների, կրոնական համայնքի գործնական պետքերի մասին է խոսում Անձևացին մեկնության վերջաբանում.

«Համարձակեցայ առ այս յանդգնաբար՝ ի հարկէ, եւ ոչ զի անձին փառս ստացայց. այլ զի զեպիսկոպոսութիւն վիճակեցայ, եւ ի վիճակելն՝ տգիտութիւն ի յոյովսն վարկայ, եւ բանիւ ամենայն ումեք զբովանդակ զայս ծանուցանել՝ անհնար գիտացի, պատշաճ համարեցայ ի գրի հարկանել. զի թերեւս այսպէս դիւրին առ ուսանել արարից կամողաց»³: Խոսրով Անձևացին, այսպիսով, հղացել է իր երկն իբրև ուսուցողական ձեռնարկ: Երկի այս բնույթն է շեշտում նաև նրա հետագա խմբագիրը՝ Մովսես Երզնկացին, որ հարստացրել է այն այլ հեղինակների և սեփական մեկնություններով.

«Զի նախ սուրբ լինիլ պարտ է, եւ ապա հանդիսանալ եւ ճառել զսրբութիւն մեծին Աստուծոյ. զի մի՛ փոխանակ վարձուց հատուցման՝ պատիժ կրիցէ անուպայ յամառութեամբն: Նաեւ կրթութեան յոյժ պէտք են գրոց սրբոց եւ ներկուռ վերծանութեան. այլեւ արտաքնոց եւս տեղեկութեան զրուցատրութեանցն, եւ բայիցն, եւ բառիցն. եւ ճանաչող միտս ունել, զի կարօղ լիցի ընտրութիւն առնել խորթատեսակ բանիցն. եւ մարմնոյ եւս պնդութեան եւ զգայարանացն առողջութեան յոյժ պէտք են: Նաեւ անդորրութեան ժամանակի եւ յապահով տեղուջ դեգերման, առ ընթեր միշտ ունելով գյուղովութիւն տառից, յորս պարապեալ հանապազ հմտասցի ճշմարիտ մակացու լինելով...»⁴:

Մովսես Երզնկացին, իբրև Խոսրով Անձևացու երկի ծրագիր, ուրվագծում է, ահա, նրա հիմնական սկզբունքները, ուսումնառության ողջ ընթացքը, որի անհրաժեշտ պարագաներն են՝ մաքուր կենցաղավարություն, անվերջ վարժանք, աշխատանք հոգևոր բնագրերի հետ, աղոթքների վերլուծություն, «ներկուռ վերծանութիւն», ընտրողական, դատողական ունակություն, քերականական իմացություններ, «արտաքին» գիտելիքներ, հմտությունների ամենօրյա զարգացում. սա է դեպի ճշմարիտ գիտելիք ու իմացություն տանող ճանապարհը, որով ամբողջանում է խորագետի, գիտնականի (մակացու) կերպարը:

Ինչպես տեսնում ենք, այս հատվածում խոսվում է ամենևին էլ ոչ «պարզամիտների ու տգետների» մասին, որոնց կրթությանն է ծառայելու երկր: Ծրագիրը չի սահմանափակվում դրանով, այլ ունի ավելի հեռահար նպատակներ: Եվ իբրև վերջնական նպատակ՝ այն նշում է մաքրակենցաղ, ներհմուտ, «ճշմարիտ մակացուի», խորագետ գիտնականի կերպարը:

Այս տողերին հարազատ է խոսրով Անձևացու մեկնության մի հատվածը, ուր նա խոսում է ստեղծագործական ձիրքի զարգացման մասին. մեծ մեղք է, երբ շնորհալի անհատը չի բացահայտում իրեն տրված շնորհքը և չի ծառայեցնում ի սպաս հանրությանը, չի գրում «աստվածային բաներ», երբ ունի այդպիսի «առաջադիմութիւն եւ պարգեւ սուրբ հոգուց». «Կամ չգրել զբանս աստուածայինս յաւգուտ կարաւտելոց, եթէ ունիցի զայսոսիկ զառաջադիմութիւն եւ զպարգեւս ի Հոգոյն Սրբոյ, որ տայ իւրաքանչիւր զկարելին՝ յաւգուտ այլոց եւ ի փառս եւ ի զարդ իւրոյ անձինն՝ եթէ կայցէ ի սահմանեալ կանոնին իւրում»⁵: Շնորհալի անհատի համար գրելը, ստեղծագործելը բարոյական սկզբունք է, «սահմանված կանոն», որին հետևելը զարդարում է նրա անձը: Այսպիսով, առաջ է քաշվում նաև ստեղծագործ անհատի՝ «ճշմարիտ մակացուի»՝ գիտնականի կերպարը. երկը նպատակ ունի ստեղծագործական սկիզբ և իմացական հմտություններ սերմանել ձիրքով օժտված անհատականությունների մեջ: Այստեղ մենք կարող ենք խոսել խոսրով Անձևացու մանկավարժական հայացքների որոշակի ուղղվածության և «ըստ առաջադիմութեան» աշակերտների նկատմամբ տարբերակված մոտեցման մասին:

Շնորհալի անհատի համար գրելը, ստեղծագործելը բարոյական սկզբունք է, «սահմանված կանոն», որին հետևելը զարդարում է նրա անձը: Այսպիսով, առաջ է քաշվում նաև ստեղծագործ անհատի՝ «ճշմարիտ մակացուի»՝ գիտնականի կերպարը. երկը նպատակ ունի ստեղծագործական սկիզբ և իմացական հմտություններ սերմանել ձիրքով օժտված անհատականությունների մեջ: Այստեղ մենք կարող ենք խոսել խոսրով Անձևացու մանկավարժական հայացքների որոշակի ուղղվածության և «ըստ առաջադիմու-

թեան» աշակերտների նկատմամբ տարբերակված մոտեցման մասին: Իր կրթական ծրագրի համեմատ, Խոսրով Անձևացին ձգտում է աշակերտների և ընդհանրապես ընթերցողների և ունկնդիրների լայն լսարանի մեջ սեր բորբոքել գրի ու գրականության նկատմամբ, մղել նրանց հոգևոր վարժանքի ու խոհականության: Նրանց համար առաջնային պետք է լինի Ս. Գրքի և հոգևոր տեքստերի ընթերցանությունը, ուսումնառությունը, վերծանությունը և մեկնաբանությունը, առանց որոնց անհնար է հոգևոր որևէ գործառնություն:

Իր հայտնի խրատի սկզբում («Բանք պիտանիք խրատականք...») նա գեղեցիկ փոխաբերություններով ու ճարտասանական ոճերով պարզում է աստվածային գրերի վերծանության խորհուրդը.

«Բազում աղօթից մեզ պէտք են, բազում արտասուցաց, յոլով պաղատանաց եւ մեծագոյն ճգնութեամբ հայցել յԱստուծոյ, զի արժանի լիցուք լուսաւոր միտս ստանալ, որով բորբոքեսցի ի մեզ բաղձանք աղօթից եւ աստուածային գրոց վերծանութիւն: Եւ համեղասցի ի ճաշակելիս մտաց մերոց խոհարարութիւնք իմանալի խորտկացն այնոցիկ, եւ ծանիցուք զշահ օգտութեանց հոգեւոր երկանց, եւ արդիւնարարութիւն անսպառ բարութեանցն: Եւ դիեսցուք սիրով զկաթն բանի հոգեւոր ստեանցն եւ զմայլեսցուք յօժարութեամբ Հոգևոյն Սրբոյ պարգեւօք. զի մի՛ մնասցուք իբրեւ զանդաստան անգործ եւ անարդիւն, որ միշտ սերմանի եւ սերմնակորոյս լինի...»⁶:

Նա բարձրացնում է գրքի, հոգևոր գրականության դերը՝ հասցնելով այն պաշտամունքի: Ամենայն բարիքի ու առաքինության, աշխարհի հաստատունության և ամբողջ բարեկարգության հիմքը գրքերն են, նրանց ուսումնասիրությունն է պարզում հավատի, կյանքի ու մահվան, երկ-

նային արքայության, աստվածագիտության գաղտնիքները՝ մղելով մարդուն առաքինի կենցաղավարության և հոգևոր գործառնության: Ահա ինչու պետք է հանապաղ ընթերցել, ուսումնասիրել և վերծանել գրքերը: Ահա ինչ խորհուրդ ունեն մեկնությունները, որոնք վերծանում են հոգևոր բնագրերի խորին խորհուրդները:

«Աստուածասիրութիւն ի գրոց ծնանի ի մարդ: Սէր աղօթից եւ արտասուաց՝ պահոց եւ ողորմածութեան, խոնարհութեան եւ սիրոյ ի գրոց բուսանի ի միտս մարդկան: Արիութիւն եւ համբերութիւն, յուսոյ եւ երկիւղի, եւ ամենայն բարեգործութեան պատճառք մեզ գիրք լինին ի վերծանելն մաքուր մտօք: Նաեւ օրինաց եւ սահմանաց, եւ ամենայն բարեկարգութեանց պատճառք եւ հաստատութիւն գիրք են աշխարհի:

Այլեւ օրհնութիւն մեռոնի, խաչի եւ եկեղեցւոյ, քահանայական ձեռնադրութիւն եւ օծումն թագաւորական, եւ քրիստոսական պատարագին բաշխումն Գրովք Սրբովք մեզ կատարեալ լինի: Նաեւ հաւատ եւ մկրտութիւն քրիստոնեութեան, եւ օրինաւոր ամուսնութիւն, եւ մահ, եւ կեանք, եւ անտի կենացն ծանօթութիւն, արքայութեան երկնից տեղեկութիւն եւ աստուածագիտութիւն, եւ սկիզբն, եւ կատարած ի գրոց մեզ իմանի:

Եւ չիք ինչ հոգևոր գործառնութիւն կամ բարեկարգութիւն՝ թէ առանց գրոց լինիցի...

Եւ արդ՝ պատուեսցուք զԳիրս Սուրբ վերծանութեամբ, որ են պատճառք մեզ ամենայն բարելաւութեան, փափագեսցուք սիրով ի վերծանութիւն Գրոց Սրբոց եւ յընթեռնուլն կրկին հոգ յանձին բերցուք»⁷:

*

Այս կրթական ծրագրի, այս հայացքների հենքի վրա մի չափազանց կարևոր միտք է ընդգծվում **Խոսրով Անձևացու «Առ վասն եկեղեցականան»** խրատում, ուր նա, մերժելով ամեն օտարամոլութիուն և օտարադավանութիուն, ընդգծում ու բարձրացնում է **հայոց լեզվի, հայ գրի նշանակութիունը**, որից դուրս հայ քրիստոնյան գոյութիուն չունի:

«... Հաւ, որ յերուսաղեմէ ելանէ՝ մոլորական շրջի, եւ քար, որ ի կարգէն ոստնու՝ յայլում վայրի գտեղի ոչ առնու:

Այնպիսի պարտ է իմանալ, որք սակս մարմնոյ հեշտութեան ի փոխումն յօժարին, թէ ի մէնջ հեռանան՝ եւ ընդ այլ քրիստոնեայս ոչ դասին, զի Աստուած պահանջէ ի մարդոյ զհաւատ, զոր յաւագանէն էառ, թէպէտ մի Քրիստոս, մի Տէր եւ մի մկրտութիւն, այլ ըստ սահմանի լեզուին եւ գրոյն զպահպանութիւն կարգին պահանջէ...» :

Խոսրով Անձևացին շեշտում է հայոց լեզվի, հայ գրի, հոգևոր գրականութիւնի նշանակութիւնը, մղում է անհատին վերձանելու, յուրացնելու հոգևոր բնագրերը, ուսումնասիրելու գրական ժառանգութիւնը, գիտական ու ստեղծագործական ուժերը նվիրաբերելու այդ ներքին վարժանքին, հոգևոր գործառնութիւնը:

Նա իր գիրքն ի սպաս է դնում ընդհանուր շահերին, համայնքի բոլոր անդամներին: Նրա կրթական ծրագիրը բավական լայն է նաև ընդգրկած նյութով՝ կրոնական ամենապարզ հիմնադրույթներից, ամենահիմնային, նախնական պատկերացումներից մինչև հոգևոր բնագրերի ներքին հոգեբանական ծալքերի բացահայտումներ, բարոյագիտական ու աստվածաբանական զանազան հարցերի վերլուծութիւններ և ընդհանրական բնույթի, ճառատիպ քարոզներ:

Մեկնությունն անհրաժեշտ նախագիտելիք, ուսուցման մի ձեռնարկ, հեղինակի խոսքով՝ «նախաշաւիղ» է ժամակարգութեան արարողակարգը յուրացնելու, նրա հոգևոր-գործնական խնդիրներին ու իմաստներին առնչվելու և ուսանելու համար: Այս ասպարեզում հեղինակի կրթական ծրագիրը միաձուլվում է նրա բարոյագիտական հայացքներին, տեսական կանխադրույթներին, աղոթքի կառուցման սկզբունքներին, մեկնութեան արվեստին ու բնագրային վերլուծութեան շրջանների հետ, քանի որ այդ ամենը նրա կրթական ծրագրի մասն է կազմում:

Կա՞ն, արդո՞ք, տեսական սկզբունքներ, ուղղութեաններ, որոնցով առաջնորդվում է հեղինակն իր կրթական ծրագրի մեջ:

Մեկնութեան ընդհանուր ոգին խրատական-քարոզչական է, և հեղինակի խնդիրն է հենց խրատաբանութեան միջոցով տեղ հասցնել անհրաժեշտ գիտելիքը: Սա ոճական սկզբունք է, որ շատ հարմար է հեղինակի հետապնդած խնդիրներին: Սրան են միանում մեկնաբանութեան, վերլուծութեան, ստուգաբանութեան տարբեր եղանակները, որոնք, բնականաբար, մեկնողական երկի անհրաժեշտ բաղադրիչներն են: Հեղինակն ինքն է տալիս իր աշխատանքին հետաքրքրական բնութագրումներ. «յայտնաբանութիւն եկեղեցական կարգաց», «մտածութիւն աստուածեղէն բանից», «խորհրդածութիւն», «բան առ բան ընդ քննութեամբ արկանել» և այլն:

Հեղինակի կրթական ծրագրի էական կողմերից է անհատական մոտեցման սկզբունքը: Խոսքով Անձևացին համընդհանուր ծեսի հիմքում դնում է անհատի և նրա հոգևոր կատարելագործման խնդիրը: Նա համայնքի, եկեղեցու, ծեսի բարդ փոխհարաբերութեան հարցերին մոտենում է անհատի, նրա հոգաշխարհի դիրքերից, պաշտամունքի ու ա-

րարողութեան խնդիրները առնչութեամբ՝ իբրև անհրաժեշտ աստիճան և կարևորագույն գործոն, նշելով անհատի ներքին մաքրագործման, «ներքին» և «արտաքին» մարդու կատարելագործման մի տեսական ուղի, որն այնքան հարագատ է Անանիա և Գրիգոր Նարեկացիների տեսական հայացքներին:

Իր խնդրի համեմատ՝ հեղինակի առաջ քաշած հարցերը, վերլուծութիւնները, տեսական հայացքները նրա կրթական-մանկավարժական ծրագրի տարբեր մակարդակներն ու աստիճաններն են ներկայացնում:

Արդեն նշեցինք, որ Խոսրով Անձևացու գրական ժառանգութիւնը սերտորեն աղերսված է Նարեկյան դպրոցի, հատկապես նրա կազմավորման շրջանի հետ: Նկատելի է նրա տեսական հայացքների ազդեցութիւնը Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան վրա: Այդ ընդգծված կենդանի առնչութիւնները և խոր ազդեցութիւնները թույլ են տալիս Խոսրով Անձևացու ստեղծագործութիւնը ներառել Նարեկյան դպրոցի զարգացման ընթացական շղթայի մեջ:

Խոսրով Անձևացու մեկնութիւնները, քարոզներն ու խրատները պարզ ու մեկին են, քանի որ ուղղված են մեծ լսարանի, ընթերցող լայն շրջանակների: Նրանում, սակայն, կան ավելի խոր շերտեր՝ ուղղված կրոնավորների բարձր դասին, ինչպես նաև նախատեսված հոգևոր գիտութիւնների, գիտական մեկնութիւնների, վերլուծութիւնների, արտաքին ու ներքին գիտելիքների մեջ հմտացող, խորացող հոգևոր խավի համար:

Այս առումով մեծ է եղել նրա «Մեկնութիւն ժամակարգութեան» երկը՝ իբրև հոգևոր-կրթական ձեռնարկի նշանակութիւնը Նարեկյան դպրոցում: Այդ է վկայում նաև

Գրիգոր Նարեկացու հիշատակարանը՝ կցված «Մեկնութիւն ժամակարգութեան» երկի ավարտին:

Ինչպես նշեցինք, հիշատակարանից պարզվում է, որ Գրիգոր Նարեկացին ընդօրինակել է իր հոր երկը, իսկ առաջին անգամ, հավանաբար, հոր թելադրանքով, այն գրի է առել Գրիգորի ավագ եղբայրը՝ Սահակը:

«Շնորհիւն Ատուծոյ եղեւ մեկնութիւն այսմ գրոց՝ ի ձեռն Խոսրովայ Անձեւացեաց եպիսկոպոսի, յոյժ հետեւողի պատուիրանացն Աստուծոյ, զոր մեզ եւ գովել անճա՛հ է, զի մի՛ գայթակղես՛ջիք ի նոյն, վասն գոլոյ նորուն հայր իմ ըստ մարմնոյ. որոյ չեմ արժանի կոչիլ որդի եւ ոչ վարձկան, ըստ գրեցելումն. այլ ի գրելոցդ լինիցին հասու խնդրողքն վասն նորա, որք սրտի մտօք ունկն դնիցեն. որք եւ աղօթիւք փոխադարձել պարտին ընդ տուիցելոյս. եւ հասարակացն տուողն Աստուած եւ ձեզ հայցողացդ ձիրեսցէ զիւրականն պարգեւ: Այլ յոյժ ամաչեցեալ եւ տարակոյս գտանիւմ ես՝ Գրիգոր, պարտաւոր պատուիրանաց Սուրբ Գրոց:

Արդ առաջին Սուրբ Գրոցս այսորիկ գծագրութիւն՝ եղեւ ձեռամբ Սահակայ՝ որդւոյ տեառն Խոսրովո՛ւ՝ սոյն Սուրբ Գրոցս մեկնողի, յերեք հարիւր եւ ինն թուականութեանս Հայոց»¹⁰:

Այս ամենը վկայում է կենսագրական և ստեղծագործական կենդանի առնչությունների և խոր աղերանների մասին, որ եղել են դպրոցի ներկայացուցիչների միջև:

Խոսրով Անձեւացու երկերը, լինելով Նարեկյան դպրոցի հիմքում, նախաշավիղ ու նախագիտելիք լինելուց զատ, նշել են նրա խորքային ու տարածական ծավալման հիմնական ուղղութիւնները:

Ժառանգական այս կապը, հայ մշակույթի պատմության մեջ գրական այս ընտանիքի խոշոր դերն է ընդգծում Ղ. Ալիշանը «Մեկնութիւն աղօթից պատարագի» երկի

հրատարակութեան առաջաբանում՝ Խոսրով Անձևացուն և իր որդուն՝ Գրիգոր Նարեկացուն, համեմատելով հայոց մեծերից Ներսիսի և Սահակի հետ՝ համարելով նրան Գրիգոր Նարեկացու «հրեղեն սրտի հնոց և առաջին դաստիարակ».

«Այլ երկրորդ իմն աղբիւր գովութեան նմա գրեսցի՝ հայրութիւն այնպիսւոյ սքանչելւոյ եւ հրեշտակակերպ զաւակի. որով համարձակիմ նմանեցուցանել զնոսա մեծացը Ներսիսի եւ Սահակայ, հրաշալի ծնողի եւ ծննդոյ, հանգոյն որոց պատուեալ իսկ կոչի Մեծ եւ մերս Խոսրով. որ ոչ միայն արեան որդւոցն՝ այլ եւ հրեղէն սրտիցն երեւի հնոց եղեալ, եւ առաջին դաստիարակ եւ թուուցիչ մարմնաքնար եւ հոգեբզող ներանձնաւորին Նարեկայ» :

Խոսրով Անձևացու խոր ազդեցութիւնը Նարեկյան դպրոցի սկզբնավորման և ձևավորման ընթացքի վրա, խոր ազդերսները դպրոցի մատենագրական ժառանգութեան հետ ի հայտ են գալիս նրա պահպանված գրական ժառանգութեան քննութեամբ:

¹ Այս մասին տե՛ս Հ. Հ. Թամրազյան, «Նարեկյան դպրոցը», էջ 42-93:

² Խոսրով Անձևացի, «Մեկնութիւն աղօթից պատարագին», էջ 66-67: Մեկնութիւն ժամակարգութեան», էջ գ-ե:

³ Մեկնութիւն ժամակարգութեան», էջ գ-ե:

⁴ «Մեկնութիւն ժամակարգութեան», էջ գ-ե:

⁵ Մատենադարան, ձեռ. N 2173, թերթ 40ա:

⁶ Նույն տեղում, էջ 63:

⁷ Նույն տեղում, էջ 64:

⁸ Տե՛ս «Էջմիածին», 1994, Զ-Է, էջ 43:

⁹ Տե՛ս «Մեկնութիւն աղօթից պատարագին», էջ 64:

¹⁰ Նույն տեղում, էջ 67:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ ժԲ: